UDC 37.016
DOI 10.46991/educ-21st-century.v6.i1.075

«ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միրզոյան Էլինա
բան. գիտ. թեկնածու,
Երևանի պետական համալսարան,
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա,
Հայաստանի Հանրապետություն
elina-mirzoyan@ysu.am
https://orcid.org/0000-0001-8263-6843

Ամփոփում

Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել ու ներկայացնել «Պոլսահայ մամուլի պատմություն» առարկայի դասավանդման առանձնահատկությունները, առարկայի շրջանակում արձանագրվող հիմնախնդիրները, որոնցով պայմանավորված՝ այդ ուղղությամբ անհրաժեշտ ենք համարում տեսական, գիտագործնական, մեթոդական նորարարական մոտեցումներ:

Առարկայի դասավանդման վերաբերյալ մոտեցումները տարբեր են ուսումնական ծրագրերում. անդրադարձել ենք այդ առանձնահատկություններին, դրսևորումներին, գերակա մոտեցումներին՝ հիմնավորելով այն մոտեցումը, որը մենք գործնականում կիրառում ենք առարկայի դասավանդման ընթացքում: Առարկայի վերաբերյալ միջգիտակարգային մոտեցման բացակայության արդյունքում խախտվում են առարկայի կիրառական ոլորտի պատկերացումներն ինչպես մասնագետների, այնպես էլ ուսանողների համար: Առարկան ինքնաբնորոշ է, ինչը ենթադրում է ճկուն մոտեցում, որի արդյունքում առարկայի դասավանդման նպատակը, խնդիրները, արդյունավետությունը, կրթական վերջնարդյունքները չեն տուժի:

Մեր հետազոտությունը կատարվել է առարկայի դասավանդման տարիներին մեր կատարած վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման, լսարանային փորձարկումների արդյունքում նկատած, արձանագրած դիտարկումների հիմքով: Հոդվածի շրջանակում ներկայացված հիմնախնդիրները տարիների ընթացքում մեր կատարած դիտարկումներն են: Առարկայի կարևորագույն խնդիրներից մեկը դասընթացի կիրառության ոլորտը չպատկերացնելն է, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, խախտված է միջգիտակարգային կողմերով առարկան դիտարկելու մոտեցումը: Թե՛ մասնագետների, թե՛ ուսանողների շրջանակում մի քանի հիմնախնդիրների առաջադրմամբ ներկայացնում ենք եզրահանգիչ դրույթներ, որոնցից առաջնայիններից է այն, որ առարկան վերակարևորման և նոր դիտակետերից վերանայման անհրաժեշտություն ունի: Այս համատեքստում քննության ենք առել նաև այն խնդիրը, որ ուսուցման ցանկալի նախապայման կլիներ արևմտահայերենի և թուրքերենի իմացությունը:

Անդրադառնալով առարկայի հիմնախնդիրներին, առանձնահատկություններին՝ ներկայացնում ենք մեր մեթոդական մոտեցումները, դիտարկումները, որոնք կիրառում ենք դասավանդման ընթացքում: Քանի որ առարկայի դասավանդման մոտեցումները տարբեր են, ինչպես նաև կիրառության ոլորտի հետ կապված կան տարատեսակ պատկերացումներ, ապա առարկան ենթադրում է կարևորված վերաբերմունք, միջգիտակարգային նշանակություն, այլ ոլորտներին սպասարկելու առանձնահատկություն: Համակողմանի եղանակով առարկան դիտարկելով՝ կկարգավորվեն նաև առարկայի կիրառության ոլորտի աղոտ պատկերացումները, արդյունավետությունը, ինչպես նաև այդպես կլուծվի ուսանողների շրջանակում առարկայի ազդեցությունը պահելու անհրաժեշտության խնդիրը:

Բանալի բառեր՝ *Կոստանդնուպոլիս, պոլսահայ մամուլ, տպագիր մամուլ, դասավանդման հիմնախնդիրներ, դասավանդման մեթոդական առանձնահատկություններ, Թուրքիա, Օսմանյան կայսրություն, Հրանտ Դինք, «Ակօս» շաբաթաթերթ:*

Համառոտ ներածական: Կոստանդնուպոլիսը (այժմ՝ Ստամբուլ) 15-19-րդ դարերում և այնուհետև՝ ընդհուպ Հայոց ցեղասպանությունը, արևմտահայ մշակույթի ամենախոշոր կենտրոնն էր. այն իր համազգային ընդգրկումներով ու ներգործությամբ խթանել է ոչ միայն Օսմանյան կայսրության հայկական, այլև բուն Հայաստանի քաղաքների ու գավառների կրոնական, լուսավորական ու մշակութային կյանքը [2, էջ 7]**:**

Օսմանյան կայսրությունն իր հպատակ ոչ իսլամադավան ժողովուրդների շրջանում մտավոր կյանքի աշխուժացման հանդեպ միշտ էլ բացասաբար է վերաբերվել ու տարատեսակ մեթոդներով (պետական և մասնավոր) բռնացել մամուլի, այդպիսով՝ նաև ազատ խոսքի, նկատմամբ: Թեպետ Օսմանյան կայսրությունում մամուլի նկատմամբ կիրառվում էին տարատեսակ սահմանափակումներ, այնուամենայնիվ Կոստանդնուպոլսում հայ մամուլը շարունակել է զարթոնք ապրել ընդհուպ Հայոց ցեղասպանությունը: Թեև 1915 թվականը ծանր հարված հասցրեց պոլսահայ կյանքի գրեթե բոլոր ոլորտներին, սակայն Թուրքիայի Հանրապետության ձևավորման առաջին տարիներին արդեն պոլսահայ համայնքում սկսել էին որոշ փոքր քայլեր ձեռնարկվել մշակույթի վերազարթոնքի ուղղությամբ [6, էջ 108]: «Առաջին աշխարհամարտէն յետոյ տիրող պայմաններու բերումով ամէն բան փոխուեցաւ յանկարծ: Մեր Պոլիսը ամայացաւ իր արժէքներէն, հիները մեծ մասամբ կորսուեցան, նորերը չյաջորդեցին անոնց եւ հետեւաբար ստեղծուեցաւ անջրպետ մը մեր կրթական, մշակութային եւ ընկերային կեանքէն ներս: Թուրքիոյ Հանրապետութեան հաստատումով երկրին մէջ կրօնքը բաժնուեցաւ աշխարհիկ կեանքէն, եւ հետեւաբար սահմանափակուեցան Պատրիարքարանի իրաւասութիւնները, դժուարութիւններ ունեցանք պահպանելու Սահմանադրական իմաստով կազմակերպեալ համայնք մը ըլլալու մեր իրաւունքը եւ մտաւորական դէմքերու պակասին կամ ստեղծուած նոր պայմաններուն բերումով, պահ մը կասեցաւ մշակութային կամ ընկերային կեանքը, դադրեցաւ նաեւ Հայ թատրոնը: Մօտաւորապէս 25-30 տարիներու պէտք եղաւ, մինչեւ որ Հայ կեանքը վերսկսաւ կենդանութեան նշաններ ցոյց տալ ու վերակազմուիլ Պոլսոյ մէջ: Այս շրջանը կը զուգադիպէր Երկրորդ Աշխարհամարտի տարիներուն» [1], [7, էջ 52-59],– այսպես է նշել պոլսահայ գրող, մտավորական Պետրոս Զոպյանը:

Կոստանդնուպոլսի համահայկական նշանակության ու ավանդած պատմամշակութային ժառանգության մասին գիտահետազոտական գրականության պակաս երբեք չի նկատվել հայկական աղբյուրներում, ինչը չի կարելի ասել կոնկրետ պոլսահայ մամուլի՝ որպես առանձին և նեղ ուսումնասիրության ուղղություն ու թեմա լինելու վերաբերյալ, այնինչ պոլսահայ մամուլի պատմության հետազոտությունն ունի գիտական, հասարակական և քաղաքական կարևոր նշանակություն, քանի որ հնարավորություններ է ընձեռում նեղ հայացքի ներքո ուսումնասիրելու ու ուրվագծելու Կոստանդնուպոլսի հայ համայնքի պատմաքաղաքական վիճակը/պատկերը՝ իր բնորոշ առանձնահատկություններով, խնդիրներով, մշակույթով, էլ ավելի համակողմանիորեն պատկերացում կազմելու ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքական քաղաքականության վերաբերյալ: Կոստանդնուպոլսի հետ մեր պատմական առնչությունները թերևս անխզելի են, քանի որ այդտեղ ունենալով թե՛ պատմամշակութային ավանդված հարուստ և թե՛ արդի պաշարով պոլսահայ համայնք՝ մենք չենք կարող չշարունակել

հետազոտել այն և չպահել մեր գիտահետազոտական տիրույթի առանցքում, իսկ դրա հարթակներից է նաև մամուլը:

Պոլսահայ մամուլը, անցնելով բազմապիսի և բազմաթիվ հանգրվաններով, գոյապահպանման պայքար է մղել և «աշխարհացրիւ Հայ ժողովուրդին միջեւ կամուրջ [3]» դառնալով՝ այդ դերը, ինչպես նկատել է Կոստանդնուպոլսի նվիրապետական աթոռի պատրիարք Մեսրոպ Մութաֆյան Սրբազանը, «չէ կատարուած առանց տառապանքի [3]»:

Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների համառոտ նկարագիրը: Կոստանդնուպոլսի հայկական ժառանգության վերաբերյալ գրականության պակաս թեև երբեք չի եղել մեզանում, այդուհանդերձ պոլսահայ մամուլի միայն առանձին նմուշներ են կոնկրետ գիտական (այլ ոչ թե հանրամատչելի) քննության առնվել, իսկ պոլսահայ մամուլի շրջափուլերի վիճակի մասին գիտական անդրադարձները գլխավորապես արևմտահայերեն աղբյուրներում են, այն էլ՝ թերթերի թղթակցության շրջանակում՝ փոքրածավալ հոդվածների տարբերակով: Առկա ուսումնասիրություններն էլ ավելի վաղ շրջանում են արվել: Պոլսահայ մամուլը թե՛ որպես սկզբնաղբյուրային, թե՛ որպես օժանդակ նյութի կարևորելն աղոտ է եղել, ավելին՝ չհասկացված: Այն հայկական աղբյուրներում ուսումնասիրվել է հատկապես օսմանյան շրջանի արևմտահայ թերթերի հետազոտության համատեքստում՝ հաշվելի/մի քանի թերթերի օրինակով, իսկ նորագույն շրջանի (գլխավորապես՝ հանրապետական Թուրքիայում գոյություն ունեցող մերօրյա հայկական թերթերի) նկատմամբ հետազոտական ուղղությունը մասնակիորեն վերսկսվել է Կոստանդնուպոլսի «Ակօս» երկլեզու (հայերեն-թուրքերեն) շաբաթաթերթի[1] առանցքային նշանակություն ունենալուց հետո: Հանրապետական Թուրքիայի շրջանի պոլսահայ թերթերի ուսումնասիրությունը բավականաչափ չի կարևորվել, քանի դեռ «Ակօս» թերթի հիմնադիր-գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի ջանքերով չվերարժևորվեց և չվերահիմաստավորվեց պոլսահայ թերթերի նշանակությունը ոչ միայն հայապահպանության տեսանկյունից, այլև համայնքային օրակարգային բազմաթիվ խնդիրների լուծմամբ:

Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել քննվող առարկայի դասավանդման ընթացքում երևան եկող հիմնախնդիրները բուհական դասընթացներում, առարկայի ուղղությամբ տարբեր մոտեցումները, այդ մոտեցումներից բխող թերացումներն ու առանձնահատկությունները, մեթոդաբանորեն հիմնավորել մոտեցումների արդյունավետությունը (կամ՝ հակառակը): Այս ամենի համատեքստում հիմնավորված կերպով առաջարկում ենք

[1] «Ակօս» երկլեզու (հայերեն-թուրքերեն) շաբաթաթերթը Կոստանդուպոլսի մեջ նմանատիպ առաջին պարբերականն էր. այն հիմնադրվել է 1996 թ. ապրիլի 5-ին, այս մասին ծանոթագրական աղբյուրներ՝ Միրզոյան Է., Հայ-թուրքական հարաբերությունների հարցը «Ակօս»-ի էջերում, Սփյուռքագիտություն: Տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 127-140, Միրզոյան Է., Հայաստան-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների խնդիրների արծարծումը «Ակօս» շաբաթաթերթի էջերում (1996-2007թթ.), «Հայագիտական հանդես», թիվ 3-4(23-24), Եր., «Մանկավարժ», 2013, էջ 262-271, Միրզոյան Է., Պոլսահայ համայնքի լեզվական խնդիրների արտացոլումը «Ակօս» շաբաթաթերթի էջերում, «Արևելագիտության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ԵՊՀ հրատ., 2013, հ. 8, էջ 252-258, Միրզոյան Է., Հայոց ցեղասպանության թեմայի զարգացման միտումները «Ակօս» շաբաթաթերթի էջերում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007 թթ.), «Ցեղասպանագիտական հանդես», 4(1), Եր., 2016, էջ 96-105, Միրզոյան Է., Հրանտ Դինք. դրվագներ կյանքից և խմբագրական գործունեությունից, «Ցեղասպանագիտական հանդես», 5(1), Եր., 2017, էջ 175-183, Միրզոյան Է., Ազգային ինքնության խնդիրը «Ակօս» երկլեզու շաբաթաթերթում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007), «Հայագիտության հարցեր», 1(10), Եր., 2017, 101-117:

լուծման խնդիրներ, մոտեցումներ, մեթոդական միջամտություններ դասընթացի վարման ընթացքում, ինչպես նաև ներկայացնում ենք առարկայի ուղղությամբ անհրաժեշտ դիտարկումների վերանայում:

Հետազոտության նորույթը: Վեր են հանվել առարկայի առանձնահատկությունները, այդ առանձնահատկություններով պայմանավորված՝ առարկայի վերանայում ու վերակարևորում, ինչպես նաև հետազոտվել և ներկայացվել են առարկայի այն հիմնախնդիրները, որոնց ուղղությամբ մեր առաջադրած դիտարկումների, հիմնավորված մոտեցումների արդյունքում առարկայի ուսուցման արդյունավետության հնարավորություններն ավելի ճկուն կլինեն:

Հիմնական նյութի շարադրանքը և հիմնախնդիրը: Պոլսահայ մամուլի պատմության ոչ միայն ուսումնասիրությունը, այլև այն որպես առարկա դասավանդելը չեն կարող լինել միայն մեկ շրջափուլի շրջանակում, թեև յուրաքանչյուր շրջափուլ այնքան հարուստ է, որ առանձին դասընթացի նյութ կարող է դառնալ. ամեն շրջափուլ պայմանավորված է նախորդ շրջափուլի հետևանքներով ու պարտադրած պայմաններով, այսինքն՝ չպետք է կտրված լինի ներքին անհրաժեշտ շղթայական կապը: Մենք, չշրջանցելով Թուրքիայում ընթացիկ իրադարձությունները, որոնցով պայմանավորված էին նաև մամուլի նկատմամբ կիրառվող խստությունները և դրանցից բխող/ածանցվող բացասական հետևանքները (որոնց բնութագրական են թե՛ զարթոնքային, թե՛ անկումային վիճակները), մեր դասավանդման ընթացքում պոլսահայ մամուլի պատմության ուղեգիծը պայմանականորեն բաժանում ենք երկու շրջափուլի՝ Օսմանյան շրջանի ու հանրապետական Թուրքիայի, որում շրջադարձային/առանցքային է եղել Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև առանձին միջանկյալ փուլով ներկայացնում ենք նախացեղասպանական և ցեղասպանական տևական ընթացքում մամուլի ներկայացուցիչների, առաջատար դեմքերի նկատմամբ գործադրվող բռնությունները, ցեղասպանական գործողությունները:

Առարկան գրեթե մշտապես ներկայացվել է որևէ այլ առարկայի շրջանակում՝ ընդհանուրի մեջ՝ թե՛ գրականության համատեքստում, թե՛ սփյուռքահայ, արևմտահայ կամ ընդհանուր հայ մամուլի համատեքստում, այսինքն՝ այն՝ որպես առանձին ուսումնասիրության ու ուսուցման առարկա, կարող ենք ասել՝ չի եղել [4 էջ 32], [5, էջ_6-44]: Կամ էլ դիտարկվել է առանձին շրջաններով՝ օսմանյան շրջանը ներկայացնելով արևմտահայ մամուլի պատմության շրջանակում, իսկ հանրապետական շրջանը՝ սփյուռքահայ: Իսկ ընդհանուր և ոչ ընդհատված ուղեգծով շրջափուլերի ուսումնասիրությունը մեծապես կօգնի հասկանալ համայնքում տպագիր մամուլի զարգացման ուղղություններն ու սկզբունքները՝ իրենց ընթացքով և պատճառահետևանքային կապով:

Առարկայի դասավանդման ուղղությամբ և ուսումնասիրության թերացումներից բխող առկա *հիմնախնդիրներից* են՝

- *Մամուլն ուսումնասիրելու գիտական էթիկայի բացակայությունն ու չհասկացվածությունը. տպագիր մամուլը հաճախ է հետազոտվում ըստ անհրաժեշտության, այսինքն՝ որևէ նյութի ձեռքբերման նպատակով: Նախ մամուլից մեծ մասամբ օգտվում են կոնկրետ որևէ նյութ հղելու, որևէ նյութի ծանոթագրման նպատակով, մինչդեռ մամուլի՝ որպես սկզբնաղբյուրային նյութի ամբողջական հետազոտությունը տարատեսակ այլ թեմաների, ենթաթեմաների լայն ասպարեզ կբացի, այսինքն՝ միջգիտակարգային սպասարկման բազմահնարավոր տիրույթ կձևավորի: Այս իմաստով սկզբնաղբյուրներից օգտվելու խնդիր ևս կա. հղում են մեկ այլ հեղինակի՝ մամուլից մեջբերած նյութերը և ըստ անհրաժեշտության՝ հաճախ անձամբ չօգտվելով տվյալ պարբերաթերթից, չծանո-*

թանալով բնագրային նյութին ու գիտականության բարեխղճությունը շրջանցելով: Նկատում ենք նաև, որ կա մոտեցում՝ մամուլը չդիտարկելու որպես սկզբնաղբյուր, սակայն տպագիր մամուլը, անկախ այն բանից՝ անկախ թերթ է, թե՝ ոչ, ժամանակի անդրադարձն է: Օրինակ՝ ինչպե՞ս սկզբնաղբյուրային չհամարել այնպիսի թերթերը, որոնք քարոզչական նպատակով են լույս տեսել, և որոնցում կարելի է հանդիպել Հայոց ցեղասպանության իրագործողների քարոզչական նպատակով անմիջական թղթակցությունը: Կամ, օրինակ, թուրքերեն թերթից ուղիղ մեջբերմամբ հղվում է նյութ, որը, օրինակ, «մաղված» տարբերակով է թարգմանված մամուլից, ինչպես նաև հղում են արդեն հղված նյութ՝ թուրքալեզու պարբերականից մեջբերված և տվյալ հեղինակի թարգմանությամբ, սակայն հեղինակին շրջանցում են և նշում են միայն թուրքալեզու պարբերականը:

- *Դասընթացը չի դիտարկվում բազմագիտակարգային մոտեցմամբ:*
- *Որպես առանձին առարկա դասընթացի անհրաժեշտությունը կարևորված/ընկալված չէ. ո՞ր մասնագիտությամբ ուսանողների համար է:*
- *Վերոգրյալից ածանցվող խնդիր, այն է, քանի որ առարկան հաճախ միայն լրագրության տեսանկյունից է կարևորվում, գիտակարգային այլ ոլորտների ուսանողներից պահանջում են, օրինակ, նաև ժանրային ոչ թե ընդհանուր պատկերացում, այլ նեղ մասնագիտական, այս դեպքում՝ լրագրողական մոտեցում:*
- *Առարկան չի դիտարկվում արևմտահայ մամուլից դուրս՝ որպես նեղ/ առանձին հետազոտական ուղղություն, այնինչ առարկայով արևելագիտական, քաղաքագիտական, սփյուռքագիտական և գիտակարգային այլ ուղղությունների ուսանողների համար կոնկրետ Կոստանդնուպոլսի, Թուրքիայի մասին սկզբնաղբյուրային հարուստ տեղեկատվական նյութ կարող է սպասարկել, մինչդեռ Կոստանդնուպոլիսը ինքնաբնորոշ է և մամուլի միջոցով նեղ հետազոտմամբ կարող է սպասարկել այլ ածանցյալ ոլորտների: Ինչ-որ մի տեղ կարելի է պոլսահայ մամուլը և գրականությունը զուգահեռել, քանի որ Կոստանդնուպոլսում գրական դեմքերը գլխավորապես ձևավորվել են՝ որպես հեղինակներ մամուլի էջերում թղթակցելով:*
- *Բացակայում է այն ընկալումը, որ դասընթացը կարող է նաև համայնքային մշակութային ժառանգության վերաբերյալ տեղեկատվական սպասարկում կատարել այլ մասնագիտական ուղղություններին:*
- *Դասընթացի մեթոդական նորարարության բացակայություն. մասնագետ-ուսանող փոխընկալման անհրաժեշտություն ունի, ըստ որի՝ հստակ կընկալի առարկայի կիրառության ոլորտները:*
- *Ուսանողների մոտ ձևավորել այն մոտեցումը, որ առարկան կարող է լինել ինչպես սպասարկող, այնպես էլ հիմնական նշանակությամբ ոլորտ: Այս մոտեցման բացակայության արդյունքում նաև նեղ մասնագետներ չեն ձևավորվում, իսկ միայն լրագրողը չի կարող այս առարկայի մեջ լիարժեք մասնագետ դառնալ:*
- *Մասնագետների խնդիր այն իմաստով, որ թուրքերենի իմացությունը պարտադիր չէ, սակայն ցանկալի է. բացակայում են նեղ մասնագետները:*
- *Մասնագետներով պայմանավորված՝ չկա հետաքրքրություն այն առանձին առարկա դարձնելու:*
- *Հետաքրքրությունը չկա, քանի որ կան կիրառության ոլորտի ադոտ պատկերացումներ. ընկալված չեն առարկայից ստացած գիտելիքի կիրառության ոլորտները թե՛ ուսումնասիրողների, թե՛ ուսանողների շրջանակում:*

- *Այս դասընթացի շրջանակում հետազոտական աշխատանքներ գրելու բարդություն այն ուսանողների լսարանների համար, որոնք արևմտահայերենի իմացության խնդիր ունեն, իսկ թերթը ուսումնասիրողը պետք է անձամբ/չմիջնորդավորված հետազոտի և ծանոթանա թերթին: Մեր դասավանդման փորձը ցույց է տվել, որ եթե ուսանողները չեն սերում արևմտահայոց ընտանիքներից, չեն անցնում «Արևմտահայերեն» առարկան ուսումնական ծրագրերով, ապա տարրական պատկերացումներ չունեն և չեն հասկանում անգամ լեզվական պարզ արտահայտություններ: Նման լսարանների պարագայում դասախոսը խնդիրը չպետք է շրջանցի և պետք է փորձի այն լուծել տարբեր եղանակներով:*
- *Կոստանդնուպոլսի հայկական մամուլի արևմտահայերենը համեմատաբար առավել ինքնաբնորոշ է անգամ այն պարագայում, երբ փորձել են հայերենի պահպանման խնդիր դնել մամուլում, այդուհանդերձ լեզուն ծանրացած է թուրքերենով, այսինքն՝ եթե արևմտահայերենի իմացությունը պարտադիր է, ապա թուրքերենի իմացությունը թեև պարտադիր չէ, սակայն ցանկալի է:*
- *Շրջանցվում է միջավայրը, որով պայմանավորված գործել են թերթերը. չեն պատկերացնում միջավայրի ինքնաբնորոշությունը, քանի որ թղթակիցները անվտանգության տեսանկյունից ներկայացել են ծածկանուններով, հաճախ խմբագիրը տարբեր անուններով որպես մի քանի հեղինակ է հանդես եկել թերթի նույն համարում՝ նորից ելնելով անվտանգության տեսանկյունից, ինչն առանձին ուսումնասիրության թեմա է, ինչպես նաև բնորոշ են ժանրային տարահնար կիրառությունները: Նաև պոլսահայ մամուլի առանձնահատկություններին անծանոթ մարդը չի կարող իմանալ, որ, օրինակ, Կոստանդնուպոլսում թերթը կարող էր համարվել գիտական, սակայն տեխնիկական պահանջներով/ձևաչափով անհամապատասխան լինել մերօրյա գիտական պահանջներին, մինչդեռ բովանդակային իմաստով կարող էր գիտական նշանակություն ունենալ* [9, էջ 37-58]*:*
- *Թվային իրականություն: Տեղեկատվական հեղափոխության և թվային իրականության պայմաններում պարբերական տպագիր մամուլի նշանակությունը ինքնասպառվում է: Իրողությունը պայմանավորված է նաև այս ոլորտում տեխնիկական հագեցվածությամբ, ինչպես նաև նյութերի արագ հասանելիությամբ, սակայն բացասական կողմեր էլ պետք է արձանագրենք. հաճախ նկատվում են տեխնիկական խափանումներ, իսկ բնօրինակ տարբերակները կա՛մ անհասանելի են լինում տարածական իմաստով, կա՛մ արդեն թերթի ֆիզիկական վիճակի վնասված լինելու տեսանկյունից:*
- *Մասնագետի առաջ ծառացած վերոնշյալ խնդիրների ու առաջադրանքների վերանայում:*
- *Կա ժամանակային ընդհատում՝ հնատիպ թերթից երկարամյա կտրված և հեռավոր ժամանակահատված ուսումնասիրողի ու ժամանակաշրջանի միջև:*

Եզրակացություն և եզրահանգիչ դրույթներ: Այսպես, վերոնշյալ խնդիրներն արդիական են. դրանք քիչ չեն, ինչպես նաև առարկան վերակարևորվելու անհրաժեշտություն ունի: Թեմայի վերաբերյալ մերօրյա ակադեմիական աշխատանքներ՝ հիմնված պոլսահայ մամուլի պատմաժամանակագրական ուսումնասիրության վրա, գրեթե բացակայում են: Մոտեցումն էլ հստակ չէ. հիմնականում ուսումնասիրվում են կուսակցական թերթերը, որքան էլ, որ թերթերը Կոստանդնուպոլսում անկախ չեն: Իսկ մնացյալ պարբերականները գրեթե շրջանցված են. ուսումնասիրվում են որպես օժանդակ աղբյուր՝ հանրամատչելի բնույթի, բայց առանձին ուսումնասիրության մոտեցում չկա:

Կառուցվածքագործառութային, սոցիոլոգիական, տիպաբանական մեթոդներով աշխատանքներ չկան:

Դասավանդման առանձնահատկություններն ու մոտեցումները: Գլխավոր խնդիրներից մեկը ուսանողության համար՝ առարկայի իմացության արդյունավետությունը, անհրաժեշտությունը, կիրառության ոլորտները նշագծելն է: Անհրաժեշտ է ուսանողներին օգնել հասկանալ պոլսահայ թերթերի հետազոտության կարևորությունը՝ որպես սպասարկող աղբյուր՝ համայնքի ինքնաբնորոշությունը հասկանալու համար: Պոլսահայ մամուլն ուսումնասիրելիս ուսանողը պետք է կարողանա սահմանել նաև հետևյալ մոտեցումները հասկանալու անհրաժեշտությունը.

Թերթի՝

- *տիպաբանական առանձնահատկությունները,*
- *գործառութային նշանակությունը,*
- *թիրախային նշանակությունը,*
- *գործունեության միջավայրը կամ առարկան,*
- *ծագման/հիմնադրման պատկանելիությունը,*
- *լսարանի բնավորությունը/նկարագիրը,*
- *թղթակցողների նախընտրելի շարադրանքի՝ թելադրման բնավորությունը,*
- *հրատարակողներին,*
- *ընթերցող լսարանը,*
- *նպատակն ու ծրագրերը,*
- *թղթակցող հեղինակների խմբին,*
- *ժանրերը,*
- *ձևավորումը,*
- *պարբերականությունը*
- *թեմատիկ ուղղվածությունը*
- *ազդեցությունը և հետևանքները:*

Դասավանդման ընթացքում կիրառվող և ցուցաբերվող դասախոսական մեթոդական մոտեցումներ: Քանի որ ուսանողները միայն պասիվ լսողներ չեն, այլև մասնակից են՝ որոնողական, հետազոտական, ինտերակտիվ/փոխազդող, ապա դասավանդման մեթոդական միջամտություններով դասախոսը պետք է այս առարկայի շրջանակում էլ ապահովի նրանց մտավոր ակտիվությունը, պրոֆեսիոնալ մտածողությունը: Ուսանողները սովոր չեն մտնել երկխոսության մեջ դասախոսության ընթացքում, բայց երբ դասախոսը նրբորեն օգնում է՝ ուսանողը վարժվի այն կերպին, որ չպետք է վախենա արտահայտել կարծիք և փոխգործակցել դասախոսի հետ նման վարման մեթոդներով:

Այս առարկայի շրջանակում դասախոս-ուսանող հնարավոր փոխգործակցության եղանակներից է որևէ թերթի ուսումնասիրության արդյունքում անհատական կամ ինքնուրույն աշխատանքի կազմակերպում-ներկայացումը՝

- ես՝ թյուրքագետ,
- ես՝ լրագրող,
- ես՝ ստեղծագործող,
- ես՝ թղթակից,
- ես՝ խմբագիր,
- ես՝ տարածաշրջանային վերլուծաբան,

- ես՝ թարգմանիչ,
- իմ խոսքը:

Այսպես, նկատի առնելով նշված խնդիրները և որոշ հանգամանքներով պայմանավորված առարկայի առանձնահատկությունները՝ հարկ է առարկայի արդիականությունը կարևորել որպես առանձին առարկա/թեմա ընդունելու մոտեցմամբ, քանի որ պոլսահայ մամուլի միջոցով բացահայտում ես մի միջավայր, որի կարևորումը մեզ համար մեր պետական բոլոր ուղղություններում մշտապես լինելու է արդիական, քանի որ մեր տարածաշրջանն է թելադրում այդ անհրաժեշտությունը:

PROBLEMS AND PECULIARITIES OF TEACHING THE SUBJECT "HISTORY OF THE ARMENIAN PRESS OF CONSTANTINOPLE"

Mirzoyan Elina
PhD in Philology
Yerevan State University,
The Armenian Genocide Museum-Institute,
The Military Academy named after
Vazgen Sargsyan of the Armenian Ministry of Defense,
Republic of Armenia
elina-mirzoyan@ysu.am

Abstract

The aim of our research is to study and present the peculiarities of teaching the subject "History of the Armenian Press of Constantinople", the problems fixed within the subject. In this regard, we consider necessary theoretical, practical and methodological innovative approaches in this direction.

Approaches to teaching the subject in curricula are different: we have considered those features, manifestations, main approaches, justifying the approach that we practically apply in teaching the subject. As a result of the lack of an interdisciplinary approach to the subject, the understanding of the applied area of the subject is impaired in both professionals and students. The subject is specific, which implies a flexible approach, as a result of which the purpose of teaching the subject, problems, efficiency, and learning outcomes will not be affected.

Our study was based on the collection of statistical data, their generalization, classroom tests that we observed and recorded during the years of teaching the subject. The problems presented in the article are our long-term observations. One of the most important problems of the subject is not to present the scope of the course, since, as we have already mentioned, the approach to considering the subject from interdisciplinary aspects is violated. Having set a number of challenges for the experts and students, we give our final conclusions, one of which is that the subject needs to be rethought and considered from new perspectives. In this context, we also considered the issue that knowledge of Western Armenian would be a desirable prerequisite for learning.

Taking into account the problems and characteristics of the subject, we present our methodological approaches and observations that we use in the teaching process. Since the approaches to teaching the subject are different, and there are also different ideas associated with the field of application, the subject acquires special importance, interdisciplinary significance. As a result of a comprehensive consideration of the subject, vague ideas about the scope of the subject and its effectiveness will also be resolved. This will also address the need to maintain the influence of the subject among students.

Keywords: *Constantinople, Armenian Press of Constantinople, print media, challenges of teaching, methodological characteristics of the teaching, Turkey, Ottoman Empire, Hrant Dink, "Akos" weekly newspaper.*

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ И ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ДИСЦИПЛИНЫ «ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ПРЕССЫ КОНСТАНТИНОПОЛЯ»

Мирзоян Элина
кандидат филологических наук
Ереванский государственный университет,
Музей-институт Геноцида армян,

Военная академия им. Вазгена Саркисяна МО РА,
Республика Армения
elina-mirzoyan@ysu.am

Аннотация

Цель нашего исследования – выявить особенности преподавания предмета «История армянской прессы Константинополя», а также представить проблемы, с которыми мы столкнулись в процессе преподавания. Для этого мы считаем необходимым осветить теоретические, научно-практические, методологические инновационные подходы к преподаванию данной дисциплины.

В разных учебных программах используются разные подходы к преподаванию рассматриваемой дисциплины. В рамках статьи мы изучили особенности этих учебных программ, приоритетные подходы, обосновали выбор подход, который мы применяем на практике при преподавании дисциплины «История армянской прессы Константинополя». Из-за отсутствия междисциплинарного подхода к предмету нарушается понимание его прикладной роли как для специалистов, так и для студентов. Дисциплина сама по себе является специфичной, что предполагает гибкость при выборе методического подхода. В итоге не должны пострадать цель, задачи, эффективность обучения и результаты образовательной программы.

Наше исследование было проведено на основе сбора, обобщения статистических данных, полученных нами за годы преподавания дисциплины, а также сведений, зафиксированных нами в ходе тестирования программы дисциплины в аудитории. Основные проблемы, представленные в рамках статьи, – это наши наблюдения на протяжении многих лет. Одной из наиболее важных проблем в преподавании предмета является отсутствие представления об области применения материала курса, поскольку, как мы уже отмечали, нарушен подход к рассмотрению предмета в междисциплинарном аспекте. Нами было рассмотрено также несколько основных проблем, отмеченных и специалистами, и студентами. В результате их изучения мы представили заключительные положения нашего исследования, наиболее приоритетным из которых является то, что предмет нуждается в переосмыслении и пересмотре с новых точек зрения. В этом контексте мы рассмотрели вопрос о предварительном условии до начала обучения: было бы желательным владение западноармянским и турецким языками.

Обращаясь к проблемам и особенностям предмета, мы представляем наши методологические подходы, наблюдения, которые применяем в процессе преподавания. Поскольку в преподавании предмета используют самые разные подходы, а также существуют различные представления о том, в какой области можно применить знания, полученные по окончании курса, то предмет имеет специфичную междисциплинарную значимость в других областях. В результате комплексного рассмотрения проблемы преподавания предмета будут скорректированы наше представление о прикладном применении предмета и его эффективности. Таким образом будет решена проблема необходимости сохранения актуальности предмета для учащихся.

Ключевые слова: *Константинополь, армянская пресса Константинополя, печатная пресса, проблемы преподавания, методические особенности преподавания, Турция, Османская империя, Грант Динк, еженедельник «Акос».*

Օգտագործված գրականության ցանկ

1. «Մարմարա» օրաթերթ, Կ. Պոլիս, 21.11.1988:
2. Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2007:
3. Հայ Մամլոյ դերը, «Ժամանակ», օրաթերթ, Կ. Պոլիս, 13 հոկտեմբեր, 1994:
4. Հայ մամուլի պատմություն (18-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ), ծրագիր, կազմ.՝ Խառատյան Ա. Ա., Մարտիրոսյան Ն. Ն., Պետրոսյան Դ. Վ., Եր., ԵՊՀ, 2016, http://publishing.ysu.am/files/Hay_mamuli_patmutyun.pdf:
5. Հովսեփյան Մ., Արևմտահայ մամուլի պատմություն (1832-1915թթ.), Եր., ԵՊՀ, 2014, http://publishing.ysu.am/files/Arevmtahay_mamuli_patmutyun.pdf:
6. Մելքոնյան Ռ., Ավագյան Ա., Ստամբուլի հայ համայնքի արդի վիճակը, Եր., «ՎՄՎ-պրինտ», 2009:
7. Միրզոյան Է., «Մարմարա»՝ հայ մշակույթի հանգրվան, Էջմիածին, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, Ժ, 2011:

8. Միրզոյան Է., Ազգային ինքնության խնդիրը «Ակօս» երկլեզու շաբաթաթերթում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007), «Հայագիտության հարցեր», 1(10), Եր., 2017:

9. Միրզոյան Է., Իթթիհաթականները Կոստանդնուպոլսի «Հայ աշխարհ» պարբերաթերթի (1919 թ.) էջերում, «Ցեղասպանագիտական հանդես», 9(1), 2021:

10. Միրզոյան Է., Հայաստան-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների խնդիրնե-րի արծարծումը «Ակօս» շաբաթաթերթի էջերում(1996-2007թթ.), «Հայագիտական հանդես», թիվ 3-4(23-24), Եր., «Մանկավարժ», 2013:

11. Միրզոյան Է., Հայ-թուրքական հարաբերությունների հարցը «Ակօս»-ի էջերում, Սփյուռ-քագիտություն: Տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:

12. Միրզոյան Է., Հայոց ցեղասպանության թեմայի զարգացման միտումները «Ակօս» շաբա-թաթերթի էջերում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007 թթ.), «Ցեղասպա-նագիտական հանդես», 4(1), Եր., 2016:

13. Միրզոյան Է., Հրանտ Դինք. դրվագներ կյանքից և խմբագրական գործունեությունից, «Ցեղասպանագիտական հանդես», 5(1), Եր., 2017:

14. Միրզոյան Է., Պոլսահայ համայնքի լեզվական խնդիրների արտացոլումը «Ակօս» շաբա-թաթերթի էջերում, «Արևելագիտության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ԵՊՀ հրատ., 2013, հ. 8:

Получено: 11.04.2024 *Received: 11.04.2024*
Рассмотрено: 15.04.2024 *Reviewed: 15.04.2024*
Принято: 08.05.2024 *Accepted: 08.05.2024*

© The Author(s) 2024
This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License